ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2021թվականի N 6

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021թվականի մարտի 9-ի N 3 արտահերթ նիստի օրակարգը.

1. Անշարժ գույքի օտարման մասին:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը օտարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

*04200683*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2021թվականի N 7

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հենրիկ Աշոտի Եղիազարյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնակամ կառույցը չի գտնվում պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրի նախատեսված գոտիներում, ինչպես նաև որ Հենրիկ Աշոտի Եղիազարյանի կողմից օգտագործված հողամասը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար՝ հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում՝ ավագանին որոշում է.

Դիմիտրով համայնքի ղեկավար Արման Իռնանովին թույլատրել՝ Հենրիկ Աշոտի Եղիազարյանին գնման նախապատվության իրավունքով, ողղակի վաճառքի միջոցով օտարել Դիմիտրով համայնքի 03-038-0018-0015 ծածկագրով /բնակավայրերի հասարակական կառուցապատման/ 0.00113 հեկտար հողամասը գործող կադաստրային արժեքով՝ 9153 դրամով /ինը հազար հարյուր հիսուներեք դրամ/ և 9,75 քմ արտաքին չափերով խանութը՝ 96525 դրամով /իննսունվեց հազար հինգ հարյուր քսանհինգ դրամ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ Կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ Կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ Կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ Կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՌՆԱՆՈՎ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴԻՄԻՏՐՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *04200683*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2021թվականի N 8

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը , որ Ռաիսա Իսակի Ցակուբովայի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Դիմիտրով համայնքի Մ. Մաշտոցի փողոց 30 հասցեի 03-038-0023-0005 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, և ըստ հողատեսքի՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա կառուցված 03-038-0023-0005-001-000 ծածկագրով շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, կառույցը չի գտնվում պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրի նախատեսված գոտիներում, ինչպես նաև որ Ռաիսա Իսակի Ցակուբովայի կողմից օգտագործվող հողամասը նախաեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիների սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, ինչպես նաև 03-038-0023-0005 ծածկագրով հողամասի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26092012-03-0212 վկայականում առկա է այն փաստը որ Ռաիսա Իսակի Ցակուբովային որպես ընդհանուր բաժնային սեփականատիրոջ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04.10.2005թ. N 199 –Ն ՀՀ օրենքի 23–րդ

/ՀՀ հողային օրենսգրքի 64 –րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով` որ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի հողամասի արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում,

ՈՐՈՇՈՒՄ Է`

Դիմիտրով համայնքի ղեկավար Արման Իոնանովին թույլատրել` Ռաիսա Իսակի Ցակուրովային` ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով գնման նախապատվության իրավունքով, ողղակի վաճառքի միջոցով օտարել Դիմիտրով համայնքի Մ. Մաշտոցի փողոց 30 հասցեի 03-038-0023-0005 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.13997 հեկտար հողամասը գործող կադաստրային արժեքով` 1 մլն 113 հազ. 376 դրամ /մեկ միլիոն հարյուր տասներեք հազար երեք հարյուր յոթանասունվեց դրամ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

*04200683*